

Թերթ կը դրկուի կանխիկ վճարողներու միայն:

ԲԱՅՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա

Տարեկ. 10 ֆր.

Վեցամս. 5 "

Սրտասահման

Տարեկ. 12 ֆր.

Վեցամս. 6 "

Վճարիկա

2 Տոլ. 30 սենդ

ԿԱՆԽԻԿ


ՊԱՅՄԱՆՔ

Գրու թիւեր եւ

չեն տրուիր:

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE



ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՍՆ

ОТГОВОРНИКЪ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, АДВОКАТЪ.

2. ՏԱՐԻ

ՕԳՈՍ. 24 ՇԱՐԱԹ 1902

ԹԻԻ 260

ՄԱՍՆԱԽՈՐ ԴՆՈՆԵՐ

Օրիորդ Լ. Ամիրխանեանց պատրաստ է գոհացուցիչ պայմաններով Գաղ. Անգլ. և Գերմաներէն լեզուներու դասեր տալ, ինչպէս նաև դաշնակի: Դիմել Պալքանքի փողոց թիւ 8.

ԱԶԳԱՅԻՆ

Ս. Սահակ Մեսոպոյայ տօնին օրը՝ Վանայ Ս. Գիգորի վանքին մէջ 70 նոր վարպետներու ոսկերչութեան վկայականի բաշխման հանդէսը կատարուեց է. Աւանդական սովորութեան մը համաձայն, էսնաֆէն մէկը կարգացեր է 250 տարւոյ հնութիւն ունեցող «կտակագիր» կամ «օրհնութեան գիր» սրուն յաջորդեր է՝ նոր վարպետներու ուղղեալ խրատներ, արհեստը զարգացնելու, հին վարպետներուն պատիւ բերելու՝ ոսկերչութեան թիրը հաւաքուող Բեսէլիէլ ճարտարապետի շնորհներով օժտուած: Նոր վարպետները վկայականները առեր են Ստեփան հայրստորբի ձեռքէն որ պահպանիչով մը փակեր է հանդէսը. Այս առթիւ ոսկերիչ էսնաֆը վանքին 5 ոսկի դարգաս եւ սպասաւորներուն պատշաճ նուէրներ տուեր է:

— Տիրար Միքայէլ Յալոբեան 1000 Օսմ. ոսկի (23.000 ֆր.) նուիրել է Սալաթիայի եկեղեցիի հողին վրայ խանութներ շինելու համար, պայմանով որ անոնց եկամուտը բաշխուի հաւասարաւ:

պէս Սալաթիայ թաղի Ս. Գէորգ եկեղեցիին, Սահակեան վարժարանին եւ Աղքատախնամին:

Բազումէն կը գրեն. — «Բազումի Հայոց Մարդասիրական Ընկերութիւնը շուտով կը ձեռնարկէ մի շինութեան՝ քաղաքային վարչութիւնից ընծայուած ընդարձակ հողաբաժնի վրայ, Իր. Թումանցի ժառանգների կողմից ընկերութեան նուիրած 30 հազար ռուբլիով: Շինութիւնը երկօրկանի կը լինի. վերին յարկում կը կենան հայ աղքատ ընտանիքներ կամ ձրի կամ էժան գնով, իսկ ստորին յարկում կը գետեղուի արհեստանոց, նոյն աղքատ ընտանիքներ: համար, նոյնպէս եւ ընդհանուր ճաշարան ու խոհանոցներ:»

— Հանդուցեալ ժողովարարի Այվաղլուքի յիշատակարոնը կանգնուեց է իր գերեզմանին վրայ, որ Թէոֆիլա կը գտնուի: Յիշատակարանը Օտեսայի մէջ շինուած է:

Հայ Հանդէսի մէջ կը կարգանք.

«Օրագրողներու Համաժողովը որ այս յուլիսին Զուլիցերիոյ Պէրն քաղաքը գումարուեցաւ, չէ ուզած պաշտօնսպէս Հայկական խնդրով ըզբաղել: Տիկին Սէվրին մաս մը օրագրողներու «իրը սոսկական անձ» ստորագրել տուաւ հետեւեալ բանաձեւը.

«Ստորագրեալ օրագրողներս իղձ կը յայտնենք որ Պերլինի դաշնագրին 16րդ յօդուածին դորժադրութեամբը Հայոց կեանքը եւ ինչքը ապահովութեան ներքեւ առնուի»:

Եւ ոչ մէկ գերմանացի ստորագրած է այս բանաձեւին տակ: Ուշագրաւ է որ մէկ անգր-

լիացի մը մինակ, եւ ան ալ աղջկ, իր ստորագրութիւնը դրած է :

Եւ այս արդիւնքը ձեռք բերելու համար աղանուսիրտ Յրանտուհին Խրդ մուրացիկ կին մը ստորագրութեան մը սլորմութիւնը հայցած է :

Իր բառերովն իսկ :
Տիկին Սէվրին իր յօդուածը կը վերջացնէ ծանուցանելով Սասունի սպառնացող վրտանգը եւ կը գոչէ, «օգնութեան հասէք, ով ամէն երկիրներու օրագրողներ : Յանուն մարդասիրութեան» :

Մինչեւ Շուշանը զարգարուի, ժամուորը ժամէն կ'ելլէ :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տեղւոյս Աղջկանց «Կրթարան»ի 7րդ տարեշրջանը կը սկսի յառաջիկայ սեպտեմբեր 2ին : Ընդունելութեան պայմաններու համար գիմել վարժարանիս տնօրէնութեան առաւօտեան ժամը 9—12 :

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ՏԻԱՐ ՄԿՐՏԻՉ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Կամ

Կ. ՊՈԼՈՐՈՅ ՀՈԼԱՆՏԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Կ. Պոլսէ կը գրեն հետեւեալը .

Այստեղի Հոլանտական դեսպանութիւնը այժմ բաւական հետաքրքրական կացութեան մը մէջ կը գտնուի, որու նմանը ուրիշ երկրի մէջ չէք կրնար տեսնել : Գեսպանութեան գլուխը կը գտնուի հիմա օսմանեան հրպատակ մը, եւ որ աւելին է, Հայ մը, որով թուրքերը թշուրտփին կատարած են :

Հոլանտական դեսպանատան առաջին թարգման Տ. Բէօն անցած տարի մեռնելով, իր պաշտօնը յանձնուեցաւ Զմիւռնի հոլանտական ընդհ. հիւպատոսարանի առաջին թարգման Տ. Մկրտիչ Կարապետեանին : Այս տարի ալ Կ. Պոլսի Հոլանտական դեսպան Տ. Փօն Վէքէրլէն արձակուրդով մը Պոլսէն մեկնած ժամանակ, դեսպանական իբր գործակատար թողուց Տ. Մկրտիչ Կարապետեանը : Թէեւ թուրքիոյ արտաքին գործոց նախարարը, որուն պաշտօնագէտ հաղորդած էր դեսպանը իր այս կարգադրութիւնը, անոր նմանն ստացած լլլալը չէր ծանուցած պատասխան ազդով մը ինչպէս սովորութիւն է այսպիսի պարագայի մէջ :

Հիմա Տ. Կարապետեան Հոլանտայի դեսպանութեան պաշտօնակատարն է, բայց եթէ ուղէ Բ. Գուսը, կրնայ անոր Հոլանտայի ներկայացուցչի պաշտօնը չի ծանշել : Երբ յիշենք թէ Սուլթանը մերժեց իր հաւանութիւնը տալ Տ. Պառէրին Պոլսի Փրատեսական դեպքան նշանակուելուն, որովհետեւ անոր կինը Հայուհի մ'էր, դիւրին է ըմբռնել թէ Հայու մը հոլանտական դեսպանութեան գործակատար նշանակուելն ինչ տպաւորութիւն կընէ Սուլթանին վրայ : Երբեք բարձրաստիճան պաշտօնատարներէ մին Եւրոպական լրագրաց թղթակիցներուն հետ այս խնդրոյ վրայ խօսած ժամանակ ըսիր է թէ՝ ինչ կրնէր հոլանտական կառավարութիւնը եթէ փառիշատակ դեսպանութեան գործակատարի պաշտօնով Լա Հէյ Ղրկերի այն հոլանտահպատակ ճաւաքի երեւելիներէ մին, որոնք խալիֆայի պաշտպանութեան տակ մտնել կուզեն :

Այսու ամենայնիւ, երբեք պալատին մէջ չեն ուզեր Հոլանտայի հետ դիւանագիտական վէճ մը յարուցանել այս առթիւ, այլ Տ. Կարապետեանի դեսպանական պաշտօնակատարութիւնն անգիտաւալ կը ձնացնեն ու այդչափը բաւական կը համարին : Սովորութիւն է որ ամեն դեսպանական գործակատար երբ պաշտօնի զուխանցնի, յաջորդ ուրբաթ օրը կերթայ Սէլամըզի արարողութեան ներկայ կը գտնուի եւ Սուլթանը զինքը ունկնդրութեան կը հրաւիրէ : Տ. Կարապետեան սոյն սովորութեան համեմատ քացած ներկայ գտնուած էր սէլամըզին, բայց ի գուր սպասեց Սուլթանին կողմէ ունկնդրութեան հրաւիրուելու : Այս կացութիւն անտանելի եղած է Տ. Կարապետեանի պէս մէկու մը համար որ ոչ միայն ամեն կերպով նշանաւոր անձնաւորութիւն մ'է, այլ եւ իր պաշտօնին համար ալ իրական արժանիք ունեցող մէկն է :

ՓՈՒՐ ԹՂԹԱՏԱՐ

Պ. Վառօթ . Պաւրկազ . — Հրատարակուելու համար ուրիշի միջոցաւ մեզ զրկուած գրութիւնները չենք կրնար հրատարակել : անոնք ուղղակի խմբագրութեան հասցէին զրկուելու են :

Ա. Ս. Փ. Պոլիս . — Ինչպէս հասկցնենք ձեզի թէ մեր պայմանը կանխիկ է :

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

(Պատասխաններ Հինգ Հարցումներու)

(Շար. անցեալ թիւէն)

Յունիս 24, 1902.

Սիրելի Տէր.

Ընդունած եմ Ձեր ներկայ ամօռոյ 16 թուականի նամակը, զոր գրած էիք Թուրքա-Հայերու մասին: Հարկ չկայ որ բոլոր թէ այդ ժողովուրդին կրած տառապանքները սրտիս մէջ ամենէն խորունկ համակրանքը կ'արթնցնեն: Ասով հանդերձ քանի որ անոնց ապագային համար այնքան հարազատ չահագորգութիւն մը կ'ըզգամ, որ Ձեր ներկայացուցած հարցումներուն պիտի պատասխանեմ այն նոյն քաջութիւնով, որով դուք համարձակած էք հարցունել:

Ձեր հարցումները մտքիս քիչ մը ազօտ կը թուին, որովհետեւ յստակ ցուցուած չէ թէ որո՞ւն կը վերաբերին, Թուրքիայի մէջ բնակողներուն թէ արտասահմանի հայերուն: Այս երկու տարբերը իրարմէ ընդարձակապէս կը զանազանեմ. քանզի արտասահման գտնուող Հայը յիշելու է թէ իր հոս՝ դուրսը ամէն բրածներուն համար գործնականապէս պատանդ բռնուած են իր եղբայրները, եւ իր ամէն գործած սխալներուն փոխարէնը անոնք պիտի հատուցանեն հոն՝ բուն իսկ իրենց կեանքերով: Ուստի կը նախընտրեմ ընդհանուր առումով մը եւ մեծ զգուշութեամբ արտայայտել իմ կարծիքս հայկական ինդիքի քանի մը երեսօլներուն մասին:

Ինչ կը թուի թէ փորձառութիւնը ցուցած է որ.

1. Օտար կառավարութիւններ սոսի Հայերու կրած տառապանքներէն ազդուած չեն կրնար համաձայնութեան գալ ի նպատակ անոնց ազգեցիկ ձեռնարկ մը ընելու, մասնաւորապէս զէնքի ուժ գործածելու, որպէս զի Թուրքիայի մէջ կազմեն քաղաքական Հայաստան մը:

2. Չարը Թուրք Սուլթանին չափ կը խորշի Հայ ազգութեան մը հաստատումէն: Եւ ուստի Ռուսիայի դրական համակրութեան վրայ յոյս դնել շատ վստահելի բան չէ:

3. Տակաւին գոյութիւն չունի Երիտասարդ Թուրքիա կոչուած կուսակցութիւն մը, որ ըլլայ միայն, յարառեւ, եւ անձնաւոր նպատակի մը համար կ'ազդակեցրուած՝ որ գործունէութեան տեւականութիւնը ապահովելու պայմանն է:

4. Հայերու հանդէպ Սուլթան Համիտի քաղաքականութիւնը, քաղաքական խռովարարները

դուրս հանելով, սանձումի եւ ոչ թէ բնաշնչումի քաղաքականութիւն է:

5. Թուրքա-Հայերու տկարութեան գլխաւոր պատճառը իրենց ցրուած վրճակը, եւ թիւով զօրաւոր եղած տեղերուն մէջն ալ բաղմութեան տգէտ ըլլալն է:

6. Թուրքա-Հայեր հալածանքէ ազատելու համար արտասահմանի մէջ եղած ո եւ է ձեռնարկ պատճառ կըլլայ անոնց տառապանքները աւելի խտացնելու, եւ անոնց կացութեան համար ո եւ է բարեփոխում աւելի կը գծուարացնէ:

7. Յուսարից արդիւնք մը ձեռք ձգելու համար պետութեանց կառավարիչներու, օրինակի համար Մ. Նահանգներու նախագահին, աղերսելով փորձը ամենէն առաջ սա մեծ գծուարութեանը կը բացիս, թէ խնդրանքին ինչ գործնական ձեւ տալու ենք, որովհետեւ պետութեանց բարեհաճութիւնը աղերսող հասարակ խնդրանք մը միայն հասարակ եւ անորոշ պատասխան մը պիտի ընդունի, եւ անոնց կողմէն ներկայացուած ո եւ է աղերսանք եթէ իր ետեւը գործնական ուժ չունենայ, արդիւնքը այս պիտի ըլլայ որ Հայերու կացութիւնը աւելի ծանրացնէ:

Այս վահատեցնող իրողութիւններէն եթէ եզրակացութեան մը հասնիլ փորձենք, ինչ կը թուի թէ կը հասնինք սա տեղը. թէ Թուրքա-Հայերու ապահովութեան եւ խաղաղութեան տեսնը շատ մօտ չէ: Սակայն լատենտութեամբ կը հաւատամ, թէ իրերու բնական ընթացքը—դուք ըսէք բարեշրջումը—պիտի բարձրէ կեանքի պայմանները: Չար մարդիկ յախտեան չեն ապրիլ: Բարի մարդոց ազդեցութիւնը գիտենք թէ կ'աճի ամէն օր՝ նոյն իսկ սա իրողութենէն թէ բարիներ չարութեամբ են աղաք սկզբունքներէ, քանի որ բարիին հակառակորդները չարութեամբ կ'ըլլան վաղանցիկ զգացումներէ միայն, որոնք ուշ կամ շուտ փոխուելով անձնասիրութեան կ'անդամալուծեն անոնց ուժը: Եթէ այս արդէս է, թէ Թուրքիա եւ թէ արտասահման գտնուած Հայեր պէտք է ըլլան, ինչպէս Ֆրանսացիներ կ'ըսեն, Աւրիւն օգտուողներ: Պէտք է հակառակին սոսի քաղաքական շարժումներու՝ իբրեւ անպտուղ: Այսու ամենայնիւ իրենց բոլոր ուժը կեդրոնացնելու են Թուրքա-Հայաստանի տկարութեան երկու գլխաւոր աղբիւրները դարմանելու—ցրուում եւ տղիտութիւն:

Ձեզ Ժշմարտիւ

Հէնրի Օթիս Տուայթ

Վարդապետ Օրինաց

Կոնստ

ԶԱՆԱԶԱՆՔ

Լայ ու խնդար. — Ինչ պատճառաւ մար-
դըս ծնելու ատեն գրեթէ միշտ կ'աղաղակէ եւ
կուլայ. եւ դարձեալ ինչ է պատճառը որ շատ
անգամ ալ մեռնելէն ետքը կը ժպտի: Յայտնի
է թէ զգացումը չի կրնար դեր մը ունենալայս
երեւոյթներուն մէջ, որոնք լոկ ֆիզիքական են:
Ծնելու միջոցին թոքերուն մէջ թափանցող օդը
ցաւ կը պատճառէ, անոր համար նորածին մա-
նուկները ճիշդ կ'արձակեն իսկ գալով մահու-
ան ատեն ժպտելու խնդրոյն, աւելի գծուար է
բացատրելը: Սակայն երեւելի դիտուն մը բոլո-
րովին բնական կը գտնէ զայն, ենթադրելով թէ
խիտ յաճախ կը պատահի որ հոգեւորքը հոգին
աւանդելէն առաջ ինքզինքը կը կործնցնէ, որով
ընդհանուր հանգիստ մը տիրելով վրան, չըր-
թունքները կ'սկսին ժպտիլ, որոնք քանի մը
վայրկեան առաջ զգաճգութեամբ կը տառապէին:

Անճարելի տեղ . . . Զուկ. — Առանց աշ-
խատանքի ձուկ տեղալէ երկնքէն, գէշ չէ անանկ
չէ: Պուկար թերթերը կը պատմեն թէ անցեալ
կիրակի Տոպրիչի ու Քալարնայի մէջ սառտիկ
հովէ մը ետքը անձրեւ տեղացեր եւ կէս ժամ
ետքը երբ մարդիկ դուրս ելան, տեսան որ փո-
ղոցները, պարտէզները ու արտերը տեսակ տե-
սակ թարմ ձուկերով լեցուած էին, անցնելու
տեղ չձգելով ճիշդ ժամ մը տեսած էր ձուկի այդ
անձրեւը: Աչքբաց բնակիչները անմիջապէս հա-
ւաքելով այդ ձուկերը ալեր ու պահեր են: Կ'ըս-
ուի թէ գիւղացի մը հարիւր օխայի չափ հաւա-
քեր է: Դանուբի վրայ իշած թաթառ մը բերած
է կ'ըսեն այդ ձուկերը:

Կողի մը կործանած

Եօքօհամայէն 15 օգոստ. թուով կը հեռա-
դրուի թէ, Թօրի-Շիմա կղզին, որ կը պատկանի
Ճաբոնի և Պօրէն կղզիներուն մէջտեղ երկարող
կղզեխումբի մը, հրաբխային բորբոքումէ մը բու-
լորովին անյայտացած է: Բորբոքումը տեղի ու-
նեցած է օգոստոսի 13-15 ի միջոցները:

Կղզին ունէր 150 բնակիչ, որոնց ամենափո-
քըր հետքը անգամ չի նշմարուիր հիմա: Կասկած
չկայ որ բնակչութեան ամբողջութիւնը անհետա-
ցած է: Կղզին հրաբխային աւերքներով ծածկու-
ած է եւ ամբողջ առկները կործանած են:

Յամաքային բորբոքումը կը շարունակուի
տակաւին, ընդծովեայ բորբոքման մը հետ: Տա

կաւին անկարելի է ցամաք ոտք դնել, և կղզին
շուրջը նաւարկութիւնը մեծ վտանգ կը սպառ-
նայ:

Մուկերու առշաւանք մը. — Միթրոփոլիթէն
կոչուած գետնատակի երկաթուղոյն շինութիւ-
նը, որ այս միջոցիս Բարիչի մէջ արագութեամբ
առաջ կը տարուի, Գլիչի և Ռօշըշուաուի բուլ-
վարները իրարանցումի մէջ գրած է: Գործաւոր-
ները Բարիչի աակը փորելով, մուկերու... պա-
լատներն ու բնակարանները քանդած են. այդ
մեծապատիւ կործաները, սարսափած իրենց գըլ
խուն եկած գծաւորութիւններէն, մէկ երկու
շարքներէ ի վեր հապճեպով դուրս կը վազեն
և յիշեալ թաղին փողոցները խուռն թաղմու-
թեամբ ողողելով... ցոյցեր կ'ընեն ելեր: Բայց
պարոն մուկերը ինքզինքնին ապահով չի զգալով
Բարիչի փողոցներուն մայթին վրայ, իրենց բը-
նակութեան վայր ընտրած են մառանները, սա-
կայն այս վերջին տեղերն ալ անշուշտ նեղ դա-
լով իրենց, բարձրացած են մինչև վեցերորդ
յարկը, ուր անվրդով և անվախ սրտով ճիւղիս
կը խաղան:

Թաղին մէջ գտնուող կատուները բաւական
չեն մուկերու բանակին գէմ պատերազմելու,
ուստի թաղեցիք ճարահատեալ դիմած են ուրիշ
ազգի մը. . . չունեւուն, այսպէս ամէն առաւօտ
ալիքնիս քրէսիսի մէջ չունեւուն բաղմաթիւ գըն-
գեր զինուորական մարզանքներ կ'ընեն, մուկե-
րէմ պատերազմի երթալու: Սակայն հակառակ
տեղի ունեցած ամենօրեայ արկունահեղ պատե-
րազմներուն, մուկերը երթալով կը շատնան:

ԷՍԴ ՈՒ ԷՍԴ

(Բոժ. — Ուրեմն, անոնց ըրածը պատերազմ
եղած չըլլար, այլ սիրահարութիւն):

ԳԻՆԵՄՈԼՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔԸ

Անցեալները Տքթ. Ա. ի հետ նստած՝ զու-
արթ խօսակցութեան մը բռնուած էինք: Յան-
կարծ նիհար, վտիտ մարմնով, ցնցոտիներ հագած
կին մը՝ փոքրիկ, ութը ինը տարեկան աղջիկ մը
ներկայացուց տոքթօրին: Դեղնած գէմք մը
ունէր աղջիկը, կը նմանէր բոյսի մը որ օդի,
պարարտ հողի պակասութենէն աշունը չեկած
պիտի իյնար ու փշրուէր: Այս երկուքէն հիւ-
ադը չկրցի զանազանել. բարեբախտաբար կի-

նը՝ աչքերը արցունքով լեցուն խղճալի ձայնով մը .

— Ամա՛ն տղթօր, զաւակս նայէ մէյ մը .
ըսաւ .

— Ի՞նչ կայ, ի՞նչ կ'ըլլայ :

— Խելքի պտոյտի պէս բան մը ունի :

Ու տեսայ որ աղջիկը բերանը լայն բացած, ապուշ ապուշ կը նայէր : Տղթօրը հասկցաւ ան միջապէս, ու՝

— Ասոր հայրը կը խմէ՞, ըսաւ,

— Այո՛,

— Ե՞րբ սկսած է խմել,

— Հարս ըլլալէս առաջ կը խմէ եղեր, մինչեւ հիմա վար չէ ձգած :

— Ուրիշ զաւակ ունի՞ր .

— Ունէի . բայց վեց տարեկան եղած ատենը մեռաւ :

Տղթօրը դեղագիր մը տալով, բարի ճանապարհ մաղթեց, ու ինծի դառնալով ըսաւ .

— Մե՛ղք, մե՛ղք :

— Ի՞նչ կայ, ինչո՞ւ երեսդ թթուեցուցիր ըսի .

— Ի՞նչ պիտի ըլլայ, գինեմոլութեան արդիւնք :

— Գինեմոլութեան արդիւնք :

— Ոճրագործութիւն է եղբայր, ոճրագործութիւն, մեղք չէ՞ արդ կ'նոջ ու զաւակին, որոնց կեանքերը բարակ թելի մը կապուած են, ինչու ասանկ վատոյժ, ճղճիմ ըլլան, մե՛ղք, հազար մեղք :

Սիրտս նեղացաւ ու զայրացած դուրս նետուեցայ :

« Հիմա՛ այդ աղջկան վրայ կը խորհիմ շարունակ, անոր որ հօրը մեղքովը կը տառապի. Մինչեւ ե՞րբ գլորինք ինկած, ալտոտ բարեբրու մէջ : Մինչեւ ե՞րբ պիտի յափշտակեն հայրերը՝ իրենց զաւակներուն կոկորդներէն հացը, ու երթան թաւալին ապականած մթնոլորտներու մէջ, մեռնելու բարոյապէս :

Գինեմոլութիւնը համաճարակ ախտ մըն է, ճշմարտապէս մեծ է ան որ հոգի մը կը փրկէ անոր ձեռքէն :

Ժուժկալներու ըկկերութիւններ պէտք է հաստատենք, դպրոցներու մէջ ուսուցիչներուն աւագ պարտականութիւնն ըլլալով «ճղոց բարոյականը» :

Ամերիկայի, Անգլիոյ և ուրիշ երկիրներու մէջ հակայի քայլեր առած են գինեհատից ընկե-

րութիւնները. մեր համեստ դպրոցներուն մէջ ջանանք տեղ մըն ալ ասոր տալ :

Գինեմոլութեան երեսէն ընտանիքներ կը քայքայուին, կը լուծուին, է՛ն մեծ առաքինութիւնն է գինեհատութեան ընկերութիւններ հաստատելը :

ՄԵՐԻ

ԱՇԽԱՐՀԻ ԼՈՒՐՋ ԷՍԿՆԵՐՆ

(ՊԱՐԻՅԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ)

Պարիկ մը տեսայ անցեալ օր պառսու,
Որ ելեր կերթար վագելով հարաւ,
Ըսի. — «Ինչո՞ւ դուն ըզմեզ կը թողուս,
Ո՛վ բարի պարիկ, պաշտպան ամէնուս» :

« — Ո՛հ, թո՛ղ օր մեկնիմ, գոչեց անհամբեր,
Հոս եկած չէի դարերէ ի վեր,
Եւ այնքան փոխուած, և այնքան վատթար,
Այնքան մոլորած կը տեսնեմ աշխարհ,
Որ վայրկեան մ'առաջ կը փութամ տալ խոյս,
Զայն բողբոջու ա՛լ չունիմ ես յոյս :

Ամէն աղջկան կուտամ գեղ, գորով,
Եւ ամէն մանչու՝ քաջութիւն կուտով,
Խելք միտք ծերերուն, հիւանդին դարման,
Եւ բոլոր աշխարհք մէկ ձայն, մէկ բերան
Վերաս կը խնդայ, ամէնքը մէկէն
Հեգնոտ ձայներով ինձ կ'աղաղակեն,
Կրնա՞ս տալ մեզի ոսկի և արծաթ,
«Ուրիշ բան պէտք չէ մեզի անկէ դատ» :

Ու այս պիղծ երկրէն կը մեկնիմ ես շուտ
Որ մի՛ գուցէ ծառն, արտեր ու թաւուտ
Եւ ծաղիկները՝ մանիշակ, շուշան,
Վարդի թուփերն ալ կազմելով խուժան,
Խընդրեն շրջառջէ նըրրահիւս քօղեր,
Եւ կամ զըմրուխտէ ցոլացիկ օղեր,
Թխթնակներն ալ կառքեր պահանջեն
Անցնելու համար մարմանդին մէջէն :


« — Ո՛հ, ո՛հ, գոչեցին վարդերը բոսոր
Որ լըսեր էին տրտունջներն անոր,
Մենք շատ ցօղ ունինք մեր թերթերուն մէջ,
Այդ ցօղը լոյս մը, գոհար մ'է անշէջ :

Թխթնակներն ալ թեթեւ սիրուն
Պատասխան տուին անոր խօսքերուն .
« — Մեր թեկն վրայ ունինք ոսկի շատ,
Արծաթ բանուած է մեր կուրծքն ու ճակատ : »

Եւ պարիկն ըսաւ. « Ասոնք են ահա՛
Լոկ լուրջ էակներն աշխարհի վըրայ : »

Թարգմ. Զ. Հ.

ԺՕՐԺ ՍԱՆ



Երկու նշանածներ.

— Ի՞նչպէս, օրիորդ, այս գիշերուան ըրած պտոյտնիս աղւոր էր .

— Անտարակոյս . . . մինչև այսօր ուրիշնե-
րու հետ ըրած պտոյտներէս ամենէն աղւորը ու
ղուարճալին եղաւ . . .

Գինովին մէկը ճամբան քալած ատեն միշտ
կը գլտորէր . անցորդ մը զայն տեսնելով ըսաւ .

— Ո՛հ, այ՛ չափ խմեր է որ ինքզինքը կո-
րուսեր է .

— Է՛հ, սառ կը խօսիս պարոն, կակազեց
գինովը, ինքզինքս չկորուսի՛ ալ քալելուս ձեռ
կորուսի .

Տասնըհինգ օրուան հարսու փեսայ դէմ դէմի
նստած կը . . . կոնծէին .

Փեսան՝ վախճալով որ հարսը ու թը տառը գա-
ւաթ խմելէն ետքը կտրուի, հաճոյակատար ձայ-
նով մը հարցուց .

— Խուչիկս, ճիպրէ մըն ալ լեցնե՞մ, թէ ոչ
վախճամ թէ դիտագ պտոյտ կուտայ .

— Ձէ՛, մէռար մը՛նեք Խաղբրիկ աղա, քիօ
մըն ալ խմեմ նէ՛ չեմ խոտար, հապա գո՛ւն .

— Ե՛ս . . . ես ալ չեմ թնտար, բայց . . . կը
խաղամ .

ՏԵՄԵՐԻՔ

Աժման Բոժոժիկ եւ Ընկ

Քաֆէ Սառուն

«Հուզողի պ խմբագրին . . . յօղաւանդուող կա-
րեւորութիւն տուող հոգաբարձուները պէտք է
գիտնան թէ՛ վերջի վերջոյ կամ առանց ուսուց-
չի կը մեան և կամ անպիտանի մը կը հանդ պին,
որովհետեւ ալ պարտք իրեն գործիք ըլլալ չու-
ղող բանիւրուն և կարողութեւ պէտք չունեցող
վարելուն արգելք հանդիսանալով, ամեն ջանք
ի գործ կը դնէ ի, են համակիր և ուսուցչութեան
անկարող կարգ մը թիրիքի պահիւններն ու շոշորգ-

ները տեղաւորելու, որուն օրինակները մէջտեղ
կը կենան .

Սիրիստրէցի մը

Տոպրիչ

Վարժարանի լեզուէ չի հասկցող եւ ուսուցի-
չը հերիի պէս գործածել ուզող հոգեբարձունե-
րուն մօտ վարժապետութիւն ընել ուզողը՝ ձեռքը
թող վերցնէ .

Բոժ. — Ո՛վ երանելի, առաջ՝ մատը երեւցնող
մը գտիր տէ՛ ետքը ձեռք վերցնողը փնտռէ .

Պաւրկազ

Այն օրը միայն խաղաղութիւն և համերաշ-
խութիւն պիտի տիրէ քաղաքիս ասի մը ազգայ-
նոց մէջ, երբ ընտրուի թաղ, խորհուրդ մը հե-
տեւալ կերպով .

1 Պահպանողական

1 Ձեզոքեան

1 Հնչակեան

1 Դրօշակեան

1 Արմենական

1 Միութենական և

1 Առնեմ-Չտամեան .

Թե՛ ևս պիտի առարկէք թէ ասիկա քառհա-
նա չորպաւսի պէս բան մը կըլլայ . կը պատաս-
խանենք որ խաղաղութիւն ըստած բանն ալ ուրիշ
կերպով Պաւրկազի մէջ չպիտի ըլլայ .

Տ.

Բոժ. — Եթէ խելք ընէք եւ Օ. Բաթ-քիւթ-
ուաղեան մըն ալ վրան զարնէք, չորպանիթ քե-
պիյէլի ալ կըլլայ .

Դանուբի բերան

Տեղւոյս հոգաբարձութիւնը որ թերթերու մի-
ջոցաւ ուսուցիչ կը փնտռէ, այդ պաշտօնը ստան-
նելու պատրաստակամութիւնը յայտնող ուսուցչին
նախ և առաջ կառաջարկէ աղջիկ-տեօ ելլելու պէս
մինչև հոս դալ անգամ մը երեսը ցուցնելու հա-
մար, ճամբու ծախքը ինք՝ եկողը վճարելու պայ-
մանաւ . Բնական է որ ասանկ արտառուց առաջարկ
մը և ոչ մէկ ուսուցիչ չկրնար ընդունիլ . ասով
հրապարակաւ եղած խնդրանքը ամուլ մնալով,
մեր վարժարանն ալ անցեալ տարուան անկա-
րողներովը դարձեալ կը մնայ .

Քամչաթ քա

Ուսուցչական մարմինը որ անցեալ տարու-
նէ տակաւին 1300 ֆր.ի պահանջը մը ունի, գէթ
այսուհետեւ ամսականները կանոնաւորապէս գան
ձել կարենալու համար ետաւրեալ ֆեբրի մը պա-
հանջեց . Խորհուրդն ալ յետ երկար խորհրդակ-
ցութեան, «Ժամկոչ Պօղոս աղբարէն զատ քէֆիլ
չունիմ» պատասխանեց . Ժամկոչ Պօղոս աղբարն

լա «Պէն իսթէրիմ պիր թիմար, օնլար կէլմիշ պէնտէն ումար» ըսելով քէֆիլութիւնը մերժեց:

Բանկալ

Այլկանց վարժարանի ձեռագործներու վիճակահանութեան տոմսակները երկու ամիսէ ի վեր պատրաստուած ըլլալով, շրջաբերութեան... չհանելու համար ճօղապին մէջ փոշիներու տակ թաղուած են. իսկ վիճակահանութեան առարկաները պահուած սնտուկին մէջ կիպէնէրը բոյն շիներ են:

Ուլիցա Տրակուման

Թէլլալ-խմբագիրը հարցման մը պատասխանելով, կը յուսայ թէ իր միջնորդութեամբ այս տարուան քաղաքիս հայ ուսուցչական մարմինը մեծաւ մասամբ պիտի բազմանայ փորձեալ և վճարելի... ցախաւերներէ:

Հաճի-բանաքօ

«Վեսէլօ» հայ դերասանական խումբը նազարի եկաւ: Ներքին փոթորիկէ մը կը վախցուի: Պ. Գալէմէան որ արհեստին վարպետներէն է, կը գուշակէ թէ Սեպտ. 15ին պիտի փրթի այդ փոթորիկը. «սակայն ինքը թեւերը սթաճած» այժմէն կը պատրաստուի իրարմէ զատուելիք տրամաթիք և հակա-տրամաթիք երկու մասերը նորէն միացնելու համար ճարել պէտք եղած... քոթ-խալը կամ չիրիշը:

Սարկա-պուրկա խումբը առիթէն օգտուելու յոյսով մեծ ուրախութեան մէջ է:

Մուսալլա

Երկու կարող դերասաններ ապապրուեցան Պոլիս, Վեսէլջ խմբին հակա-տրամաթիք մասին համար:

Նոյն

Կարող դերասանուհի մը Պոլսէն այսօր վաղը կը «պատուի» Վեսէլջ խմբին տրամաթիքօֆիլ մասին համար:

Սանգրալի վարչութիւնն ալ շուարած քննարկած է թատերասրահը երկու խնդրարկումաւորէն որոնք վարձելը պիտի թխալի չկրնալ որոշելուն համար:

Վառնայի թատերասէր հասարակութիւնն ալ պատրաստուած է այս երկու մասերուն ներկայացնելիք վերջին իրական կատակերգութեան հանդիսատես ըլլալու համար:

Բոժ. — Ես ալ պատրաստուած եմ Պ. դերակատարները քահանայապետութեան ծախարելու համար:

Ուլիցա Զար Պօրիս

Հաճի աղան՝ Ղալաթիոյ մարգին վրայ խալին փռեր, տուեր է աւետարանը, առեր է թանկութեան, կեանք իմ ազնաւորազա կընէ: Սուրբ գիտցածն իմ քաւի օրինակ ըլլալու համար խաչը ծոցէն կը հանէ:

ԱՐՇԱԿ

Ա Զ Դ

— «Գութան» գիտակահանգէսի տեղւոյս յարգոյ բաժանորդը թող դիմեն նոր գործակալ Պ. Համբարձում Գիրիշեանի «Մուսալլա» եւ ստանան իրենց թերթերը:

Նոր բաժանորդագրուիլ փափաքողներ ինչպէս նաեւ հետով գնել ուղղներն ալ կրնան դիմել յիշեալին:

Մէկ թիւի գինն է 1 ֆր. կարծէ որ ամեն անհատ ունենայ այս հանգէսին ամբողջ թիւերը որոց պարունակուին խիստ շահեկան է:

Ծ Ա Յ Ո Ւ Դ Ի Ր Ք Ե Ր

Հետեւեալ գիրքերը մեր խմբագրատան մէջ կը ծախուին:

Էլ Պարպուլիէ, Մոլիէռի կատակախաղ 1 տարար, գին 50 սանդղիմ:

Բազմախաղ պատկեր 25 սնդղիմ:

Թաղաքեալ Փիլիկ աղբօր հարսնիքը 60 սնդղիմ: Բարեկենդանի անկուտիները, կատակախաղ 1 տարար 50 սնդղիմ:

Մահճուպիլէթին մի քեաֆաթը, հօմէտի պիր բէրտէ, 50 սնդղիմ:

Գագանճ գօճա եախօտ էնֆիլէճի, հօմէտի պիր բէրտէ, 50 սնդղիմ:

Լուսինեան Իշխան — Փրանսահայ Բառարան գին 25 ֆր. ոսկեգրամ: Պուլկարահայ վարժարանաց համար 20 ֆրանք:

Ե. Մուրատեան — Քննական պատմութիւն Արշակ Բ. ի և անոր Պապ որդւոյն 2 ուկէս ֆր.

Թրթուումներ (ստանաւոր) 25 սնդղիմ:

Հոլատուն " " 25 " "

Արտասուաթոր " " 20 " "

Թ. Գ. Հինդլեան — Տեւական և գործնական Քերականութիւն Պուլկարեքէն լեզուի 1 ֆր.

Շէյքսպիրի Համլէթը, ողբերգ. 2 50 ֆր.

ԱՅԻՆԵԻ ԼԵԹԱՅԻՔ

ՊԻՆ ՊԻՐ ԱՏԷՏ

(ՄԻՒՆՏԵՐԻՃԱԹԸ)

Կիւտիւրիւճիւ Ֆարալար վէ Հիքեայէլէր . Մալիւմա .
Թը Ֆէննիյէ . Լուղաթը Լէթայիֆ . Ֆէննի էյլէնճէ-
լէր վէ Բէսիմլի Պիլմէճէլէր :

160 սահիֆէտէն իպարէթ օլուպ, բէյտէրբէյ
նէշը ցլունան մէզքիւր քիթապըն պիւրինճի ճիւ-
աի խիթամ պուլուպ, իտարէխանէմիզտէ սա-
թըլմտգտաւըր Թիյ 2 ֆրանք :



ԱՅ ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԻՍԼՄՍԵԱԿ

Քանի մը ամիսներ առաջ արտասահմանեան
մամուլի միջոցաւ ծանուցուած այս հանդէսը Վե-
նետիկի մէջ սկսած է հրատարակուիլ . զոր կը
խմբագրեն վաղածանօթ երկու գրագէտներ՝ Տ.
Արփիար Արփիարեան և Տ. Լեոն Բաշալեան :

Բաժնեգիրն է	Տարեկան Վեցամսեայ	
Եւրոպա , Ֆրանք	10	5
Ամերիկա, Տոլար	2	1
Ռուսիա , Րուպլ	4	2

Հառցէն

Հայ Հանդէս

Գասէդդա բօսդայ 341

(Իթալի)

Վընիզ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ուսումնական խորհուրդէն վկայուած ուսու-
ցիչ մը պատրաստ է պաշտօն ստանձնել Պուլկա-
րիոյ աշգային վարժարանայ մէջ .
Դիմել խմբագրութեան :

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ՈՒՆ

ՄԻՒԹԱՐ ՊՈՆՏԱՅԻ

ՔԵՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Պատկերազարդ

Նախակրթարան Ա. Տարի

Գրել կարգալու ընական դրութեամբ

Նախակրթարան Բ. Տարի

Կարգալ-Խօսիլ-Գրելու դրութեամբ

Սոյն ընթերցարանը որուն Բ. հաստըն ալ այս ան-
գամ հրապարակ ելած է, կրնայ նկատուիլ իբրեւ կատա-
րելագոյնը բոլոր այն ընթերցարաններուն որոնք մինչև
այսօր երեցած են : Մանկավարժական էն նոր մեթոտ-
ներուն համեմատ պատրաստուած , Պոնտայի ընթեր-
ցարանը կուգայ ամբողջովին կը լեցնէ մանկավարժական
պակասը որ այսքան տարիներէ ի վեր կը արիւր մեր վար-
ժարաններուն մէջ :

Հոս երկարօրէն չենք ուզեր զբաղիլ անոր անհա-
մեմատ ու անքննադատելի առաւելութիւններովը . մինակ
ղանկիւ ջերմապէս կը յանձնարարենք մեր բոլոր ու-
սուցիչներուն որ՝ յանուն դաստիարակութեան՝ փութան
այս անմրցելի մեթոտով զպատրաստուած գիրքը աւել
Հայ մանուկին ձեռքը :

Կեդրոնատեղին է Ա. Զարպհանէլեան գրատունը,
Վաշնա : Գին. Ա. տարի 5 դհն. Բ. տարի 5 դհն. :

—X—

ԽՄԲԱԴՐՈՒԹԻՒՆ „ՀԱՅԵԼԻ“

—X—

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս,
հասցետոմս, նամակագլուխ, հարսանեկան հրա-
ւիրագիր, մահազդ, թաոեքական ազգեր, տոմ-
սակներ, գիրք և յայտարարութիւններ :

Գիները յոյժ դիւրամատչելի :

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարու-
թիւնները ճշգրութեամբ և փութով կը կատար-
ուին :

Այցետոմս տպագրել տուողներուն նուէր կը
տրուի «Ի՞նչպէս գործածելու է այցաքարտը» ա-
նուն հրահանգի գրքոյի մը :

Յանձնարարութիւնները կանխիկ են :

Печатница "Взаимност." — Варна